ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ENCYCLOPEDIE (مجموعة علوم)

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ — Ղ. ԲՈԼԱՏ

ՏՆՕՐԷՆ — Վ. Գ. ՔՋԱՐԴԱՐԵԱՆ

Բ. ՇՐՋԱՆ — ԹԻՒ 7 — 1898 ԱՊՐԻԼ 18

Ամեն տեղի համար Տարեկան կանխիկ 50 դահ․ Վեցամսեայ 25, իսկ եռամսեայ 13 դահ․ Օտար երկրաց համար Տարեկան կանխիկ 15 Ֆրանք․ Թղթատարի ծախքը խմբագրութեան կը վերաբերի․ Հատը 40 փարայ․ Գաւառներէ փոստի պուլ ալ կ'ընդունուի 100 ղրուշի տեղ 105 ղրուշ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ — *Ստուգաբանական բառարան Գ.*

ԳԱՌՆԻԿ ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ — *Հայ. լեզու Գ.*

ՔԱՐՈՂ — *Թուանորդին [Վէպիկ].*

Ղ. ԲՈԼԱՏ — Ջերամաքուծութիւնը — *Բամբէզօռեան գրութիւնով.*

Ա. ԽԱՆՃԵԱՆ — Առողջապահական նօթեր — *Մարմնամարզը.*

Յ. ՃԷԼԱԼ — Գիտական քրոնիկ — *Ոգելից ըմպելիներ.*

ԱՐԱՔՍ — Առտնին տնտեսականք — *Անձեռոցներու ծալլուածք.*

ՏԱՆՏԻԿԻՆԸ — Խոհանոցի բաժինը — *Սովորական համեմունք — Վանիլեաի սերուց.*

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ — Արհեստական գիտելիքներ — *Ձիւնիօյէ առարկաներու ներկ — Ծորակները կամ եղէ արգիլելու խիւս — Տակառներու մաքրութիւն.*

Յ. ՇԷԼԷՓԵԱՆ — *Մլուկէն վերջը մուկը.*

Վ. — *Յ. Թիւլիւզեան եւ Սրապեան.*

Թղթակցութիւնք Հանրագիտակի.

Հատը 40 փարայ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Կ. Պոլիս Չախմախճիլար եօգուշու Չիւմպիւլիւ խան Թիւ 28

ՏՕՔ. Գ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Որ 25 տարիներէ ի վեր զինուորական և քաղաքային հիւանդանոցներու մէջ պաշտօն վարած է, պատիւ ունի ծանուցանել թէ՝ այս անգամ իւր բնակութիւնը հաստատած է Գատը-Գիւղ Պաաէմ փողոց թիւ 12. ուր հիւանդ կ'ընդունի ամէն օր, ի մասնաւորի աչքի հիւանդութեանց: Իսկ Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը կը գտնուի Հայոց եկեղեցւոյ դիմաց Չպուքճեան Լեւոն էֆէնտիի հանրածանօթ դեղարանը, և հոն իրեն դիմող աղքատ հիւանդները ձրի կը դարմանէ: 1—10

ԱՊԱՈՒԿ....

Ամսական կամ շաբաթական փոքրիկ վճարումով մը կ'ուզէք մատենադարան մը ունենալ, անմիջապէս դիմեցէք Զարդարեան Գրատունը, ուր ամէն տեսակ գրքեր կը գտնուին, հին ու նոր հրատարակութիւններ, պատմական գրական, վիպասանական եւայլն եւայլն:

2. Հին թերթերու հաւաքածոյներ, լրագրերէ պակաս թիւեր ունեցողները կրնան իրենց ուզած թիւերը գնել մեզմէ:

Պատուաւոր երաշխաւորութիւն պահանջելի է, կանխիկ գնումի զեղչ:

* * *

Ամիսը 10 ղրուշ միայն

Վճարելով ուզած գրքերնիդ կրնաք առնուլ Զարդարեան գրատունէն ուր ամէն տեսակ վիպասանութիւնք, գրական գրքեր եւայլն կը գտնուի. 10 ղրուշի վարձքով մը ամիս մը ամբողջ ուզած գրքերնիդ պիտի կրնաք կարդալ:

Պայման. — փոխարժէք մէճիտ մը վճարում և կամ պատուաւոր երաշխաւոր մը կը պահանջուի:

Ինչպէս կը տեսնէք վերոգրեալներէն ամէն կերպ դիւրութիւն կ'ուտանք հասարակութեան ընթերցասէր մասին համար, որուն ուշադրութիւնը կը հրաւիրենք, ալ չըսուի թող որ հայերէն գրքերը սուղ են և անմատչելի:

* * *

Զարդարեան Գրատունը կը պատրաստէ ամէն տեսակ տպագրական և կազմի գործեր, վիմագրութիւն թէ տպագրութիւն նամակագլուխ, քարթ-վիզիթ, ազդարարութիւն, հարսանեաց հրաւիրագիր, մահազդ, եւայլն:

ՄԼՈՒԿՆԵՐԷ ՄԻ ԶԱՐԶԱՐՈՒԻՔ

Մլուկները որ շատ աւելի կը գտնուին Գում-Գաբուի կողմերը, սկսած են իրենց անտանելի ներկայութեամբ պատուել:

Մի նեղուիք,

Դիմեցէք Խաչիկ Թէսճեանի դեղարանը, Լանկա Ալաճա-Մէսճիտ թիւ 9, հոն պիտի գտնէք մլուկի փոշի Բուբ, և միանգամայն ամէն գրպանի դիւրամատչելի:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐԶԷ

Կ. Պոլիս Թէսֆիճեան խանի տակ թիւ 3

Վաճառատունս պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ ամէն տեսակ թարմ դեղօրայք. վիրաբուժական գործիքները, Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով, Լ. Ասլանեան և Ս. Էմիրզէ ընկերութիւնը երկար ատեն անձնական փորձառութիւններ ունին: Ամէն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացնելու համար, մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը ղրկենք դեղօրայք ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Զարաճճի մլուկներու և լուերու եւլն. համար միջատասպան փոշի Poudre insecticide մեծաքանակ բերել տուած ենք ուղղակի Տալմացիայէն, որուն համար մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրեմք յարգոյ հասարակութեան:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopedie {مجموعة علوم}

Բ. ՇՐՋԱՆ | ԹԻՒ 7 | 1898 ԱՊՐԻԼ 18

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Տ. ՅՈՎՀ. Ա. ՔՀՆ. ՀԻՒՆՔԵԱՐՊԷՅԻՆՏԵԱՆ

Դ.

«Si l'on peut pardonner l'es[illegible]
d'un mauvais livre »
«Ce n'est qu'aux malheureux [illegible]
composent pour vivre»
MOLIÈRE

Այս գիրքը դժբաղդաբար չ'ունեցաւ [illegible] թռիչ, ոչ ալ հեղինակին ապրուստի [illegible] միջոց հայթայթեց. հաղիւ երեւցաւ [illegible] բապարակին վրայ, և ահա նոյն ատենի լրագիրներէն ոմանք զայն հայհոյնե-ով ողջունեցին, մինչդեռ անդին հեղինակը՝ իր գրքին ալ, աշխարհի ալ իր հրաժեշտի ողջոյնը կուտար։

Եւ երբ երեսուն տարիներէ ի վեր աւետուած և ափնուն սպասած այս գիրքը երեսուն վայրկեանէ նուազ միջոցի մէջ բզկտուեցաւ՝ անկարելիր հանդիսատեսները քամահրանքով երեսնին մէկդի դարձուցին ու թողուցին որ հինգ երկար տարիներ վրայէ վրայ դիրքին և խորունկը թաղեն անոր յիշատակը ու մոռցուին երկն ալ երկասիրողն ալ։

Ա՛հ, մոռացութի՛ւն, ի՞նչ դառն է մոռացութիւնը։ Քննադատին կծու ոճը, անոր կսկծեցուցիչ հեգնութիւնները, անակնկալ սրաբանութիւնները, նոյն իսկ քաշկռտուքը սիրով կը տարուին։ Անոնք ի՞նչ են որ, հասարակութեան միտքը գրքին վրայ արթուն պահելու միջոցներ են, բայց երբ անոր վրայ աղէկ կամ գէշ [illegible] մը բաղ չի գտնուի՝ գիրքն ալ, գրողն ալ երկրորդ անգամ կը մեռնին։

[illegible] այս արհամարհոտ լռութիւնն է [illegible] դոր նախաձեռնարկ եղանք [illegible] այնչափ յետամնաց քննադատութիւն մը բանալու համար որչափ [illegible] քանցս ուղղնաւորած լեզուաբանական խնդիր մը իր շեղած ճամբէն ուղիղ ճամբու մէջ բերելու համար։

Նախորդ յօդուածով կը խոստանայինք ցուցնել թէ Հիւնքեարպէյենտեան Եռ-ԲՈՐԴՈՒԹԻՒՆԵՐՈՒ վրայ հիմնած է իր Ստուգաբանութիւնը։ Այս գործը թերեւս դժուար ըլլար եթէ հեղինակը հոգ չի տանէր ինքզինքին դէմ այդ վկայութիւնը տալու։

Դժուար պիտի ըլլար՝ ըսինք որովհետեւ հերիք է որ մէկու մը դէմ բերանդ բանաս, հասկցողն ալ չի հասկցողն ալ քննադատութիւնը Զրէ ԷՊՊՐՈՒԹԻՒՆ կը համարի. և մենք երախտագէտ ենք հեղինակին՝ որ իր գրքին մէջ իր տարակոյսները գրի առեր է, որպէս զի մենք ի-

բաւունք ունենանք և ըսենք։ Բոմբոռոռ է՝ բանն առանկ է։

Բայց ի՞նչպէս ընենք, ո՞ւր ունները, կոթեղները, ոնները, արդեւոնները, այնչափ շատ են այս գիտական սկզբունքէ զուրկ գիրքին մէջ՝ որ սկիզբէն, մէջէն, վերջերէն մէյմէկ օրինակ արտատպել և միւսներուն միայն էջերը նշանակելու ստիպուեցանք։

Ա. Օրինակ էջ 14։ — Ըստ ամենայն հաւանականութեան մերս առաքինի ծագի ի բառէս առոյգ։

Բ. Օրինակ էջ 62։ — ԴԵՍՊԱԿ ՝ուր ծագել ի բառէս ԴԵՍՊԱՆ։

Գ. Օրինակ էջ 191։ — ՋԱՅԼԱՄՆ։ իբր՝ ՀԱՅԼ ԻՄՆ։ և ՀԱՅԼ ՝ուր լինել թրք։ ՋԱՅԼԱԳ (անուն թռչնոյ)։

Դ. Օրինակ էջ 244։ — Ըստ ոեղ առելի բանաւոր է կարծել՝ թէ մեր մալուխ բառը ծագած ըլլայ ի թրք։ մալուխ բառէն։ որ նշ։ գոմէշի ճագ և ի մեզ առնուած է իբրեւ պարան։

Ե. Օրինակ էջ 349։ — ԱՆԱԼՈՒԹ։ մեր բառը կը ՝ուր ունի եբրայեցերէն է, ԼԵՒԻԱԹԱՆ կերպ կերպ մեկնուած է բոլորն ալ անոգոյք։

էջ 13	թուի թէ	էջ 236	թուի թէ
» 24	»	» 262	»
» 27	»	» 271	»
» 46	»	» 281	»
» 75	»	» 281	»
» 100	»	» 293	»
» 101	»	» 329	»
» 101	»	» 331	»
» 115	»	» 334	»
» 118	»	» 335	»
» 161	»	» 337	»
» 168	»	» 341	»
» 183	»	» 341	»
» 186	»	» 342	»
» 189	»	» 343	»
» 190	»	» 347	»
» 191	»	» 349	»
» 225	»	» 352	»
էջ 353	թուի թէ	էջ 160	թերեւս
» 356	»	» 257	»
» 357	»	» 279	»
» 360	»	» 361	»
» 360	»	» 8	կարծեմ
» 15	թերեւս	» 8	»
» 32	»	» 62	»
» 80	»	» 166	»
» 81	»	» 244	»
» 140	»	» 190	Արդեօք

Դարձեալ։ քանիցս մեր նախորդ յօդուածներուն մէջ զրուցեցինք թէ բնաղանցականը մեծ տեղ մը կը բռնէ այս գրքին մէջ։ կրնայինք բազմաթիւ օրինակներ մէջ բերել, և սակայն հետեւեալները բաւ կը համարինք։

Ա. Օրինակ էջ 8։ — Ի՞նչ բան սակայն առիթ կուտայ մեզ փէր բառը էրբառէն հանելու։ այս առիթը տուած է մեզ (ներուի մեր առանձին կարծիքը) այն նշանաւոր տեսիլքը զոր Նաբուգոդոնոսոր տեսաւ և զոր Դանիէլ մեկնեց։

Աղնիւ ընթերցող, լաւ չէ՞ր ըլլար որ Սբ։ Գիրքը արտաքին գիտութեան հետ չի շփոթուէր։ վասն զի, ըսէք, կ'աղաչենք։ Նաբուգոդոնոսորի դերբնական տեսիլքը ի՞նչ վերաբերութիւն ունի լեզուաբանական օրէնքներու հետ։ Դանիէլ այդ տեսիլքը մեկներ է։ Լա՛ւ, Դանիէլ մարգարէ մըն էր և իր մեկնութիւնը ընդունելի է իսկ մենք սովորական մահկանացուներ ենք և ստուգաբանութիւն մը երբ այդ պայմաններու մէջ կը դնենք (ներուի մեզի ալ մեր առանձին կարծիքը) Ստուգաբանութիւն ըլլալէ կը դադրի երաղահան կըլլայ։

Բ. Օրինակ էջ 361։ — Այս է. Շամիրամայ ծննդեան առասպելը։ Այս բանասիրական հետազօտութիւնները թէ և շատ քիչ արժէք ունենան։ սակայն միշտ գովելի է և բարեպաշտական այնպէս ընդունիլ։

Շատ լաւ, ո՞վ ատոր հակառակ կը պնդէ, թէ որ Խրիմեանի համար առասպելներն ալ առանց քննութեան ընդունիլը բարեպաշտական է՝ ալ գրքին ամբողջութեան վրայ ի՞նչ ըսելիք կը մնայ. այս գիրքը հրաշալի գիրք մըն է Շամիրամի ծննդեան պէս.՝.՝.՝։

Գ. Օրինակ էջ 168. — Շատ գեղեցիկ է այս կտորը բայց բացատրելը դժուար. ուստի ընթերցողին հանձարոյն կը թողունք խելամտել։

Եթէ իսկապէս դժուար է. ու եթէ ափսո՛ս ինք ալ չէ կրցեր բացատրել, ինչո՞ւ այդ կտորը դրեր է գիրքին մէջ. և քանի որ ընթերցողին հանձարոյն կը թողու խելամտել ինք ի՞նչ երեսով իբրեւ հեղինակ կ'երեւնայ հրապարակին վրայ. ի՞նչ աւելորդ ձանձրութիւն։

Դ. Օրինակ էջ 115. — Դառնանք մեր պատասխանի բառին ստուգաբանութեան որ ոչինչ նուազ կնճռոտ ըլլալ կը թուի. ուստի ջանանք պարզել ըստ մարթելոյ բայց միշտ վերապահութեամբ։

Հապա ի՞նչ կարծեցիր. աղէկ որ դուն ալ կռահեր ես կնճռոտ ըլլալը. դիւրի՞ն բան է Դեղոիկ փոէն պատասխանի հանել. Հոգիդ սիրես, ազնիւ ստուգաբան, 'սա երեսուն տարուան ուքնութենէն վերջը, ՇԷրպանոՐիՆդ ալ ՍպոՐգեՔանոՐիՆդ ալ քեզի վերապահիր ինտո՞ր կըլլար։

Ե. Օրինակ էջ 335. ՎԻՇԱՊԷՆ կ'ելլէ ՎԻՐԱՊ, կը խոստովանինք որ բոլոր այս բացատրութիւններէն եռքը դարձեալ վիրապ և վիշապ բառերուն խորհրդական քողը չը կրցինք ըստ արժանւոյն վեր առնել։

Հա՛ սանկ, տեսա՞ր մի եա. շիտակ խոսիլն ալ ասոր կ'ըսեն։ Խոստովանէ՛, բարեկամ, խոստովանէ. չէնք չնորհք խոստովանէ որ ուրիշին պաշտպանութեան խօսք չի ձգես, չի մեղադրեն մեզ, ու սրվոր նրվոր բերնին ծամոց չըլլանք։ Բարեկամ, հապա քեզի ո՞վ ըսաւ որ Վերոդ Վիշոդէն կ'ելլէ։ Գոնէ Վիշոդ Վերոդէն հանէիր բանի մը կը նմանէր. հէյ կիտի Ստուգաբանութիւն հէյ։

Ձեր չատագովն ալ ելեր թերեւս կեանքին մէջ յոռնոկան բռնի-գէրոյծ առաջին և վերջին բառը ԷԴԻՄՈԼՈՒԱՆ կլտորցուցեր է որ ամէնքը սահմռկին, արմենան ու զարմանան։ Զէ՞ք գիտեր Գարագաշէֆէնտի որ՝ Զոլագիտէս էֆէնտի էլէնիֆ իրմէ ուրիշ մարդու չի տար, նոյնիսկ Զեզի։

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒ

Գ.

Բաժանումն լեզուաց. — Մեր երկու նախորդ յօդուածներով ըստ կարելւոյն խօսեցանք թէ լեզուներն, զորս այսօր մարդկային ազգը կը խօսի, միակ աղբիւրէ սերած, ծնունդ առած՝ և յեղաշրջման անխուսափելի օրէնքով զարգացած են։

Այդ աղբիւրը սակայն կորսուած է և ցայսօր կը մնան միայն այն լեզուներն, որոնք կրենց ծագումը անոր կը պարտին և թէ անկարելի է ճշդիւ գիտնալ այն ժամանակն, ուր մարդկային ազգը վերոգրեալ աղբիւրն, կամ միակ լեզուն կը խօսէր։

Կը մնայ գիտնալ թէ այդ միակ լեզուն, այլազան միջավայրերու մէջ տարբեր զարգացում մը ունեցած էր, ի՞նչպէս և որո՞ւ նախաձեռնութեամբ բաժնուեցաւ։

Բացայայտ է արդէն թէ իւրաքանչիւր լեզուներ բառերէ կազմուած՝ և այդ բառերն ալ արմատներէ, որոնք առաջիններէն աւելի բազմաթիւ են լեզուի մը մէջ։ Ոմանք բոռ և պոռոտ բա-

ռերն կը շփոթեն իրարու հետ արմատներն իսկ բա- կոչելով, բայց բառ չէ կարելի անուանել անոնք այլ բառերը կազմող տարրեր։ Արմատները պարզապէս գաղափարներ են և ասոնցմէ է որ ծագում կ'առնեն բառերը՝ բայի, ածականի, գոյականի, դերանունի և նոյն իսկ մասնիկներու դիմակին ներքեւ։ Հայը կազմող տարրերը կրնայի՞նք հայ անուանել և ալիւրին հայ ըսել և կամ ջուրը հայ կոչել։ Անշուշտ ոչ։ Սակայն կրնանք և կամ ներելի է մեզ՝ ալիւրէ շինուած բոկեղներու (ՀԷՔ), պղակունդներու (ՊՂԱՆ) և կամ կարկանդակներու պեռակ մը հայ անունը տալ։

Այսպէս բառերու ձեւերը միշտ փոփոխման ենթակայ են, բայց անոնց արմատները ոչ երբեք։ Այնպէս որ երկար բառ մը իր արտաքին կերպարանքին մերկացուցած ժամանակ՝ միավանկ արմատ մը կ'ունենանք, որ բառին նիւթն է մէկ բառով։

Օրինակի համար, հայերէնի վրայ խօսելով՝ «ՄԵԾՈՒԹԻՒՆ» բառն իր ՈՐԻՆԷՆ մերկացուր, կ'ունենաս եռագիր արմատ մը՝ ՄԵԾ, որ հաւանականաբար նոյնն է ընդ յն. μέγας Մ'ԷՂ։ Այսպէս է միւս բոլոր լեզուներու բառերն։

Ահա, արմատներու այս անփոփոխելի յատկութիւններն էին որ լեզուաբաններու առիթ ընծայեցին խումբերու բաժնել լեզուներն։ Անցեալ դարուն, Գերմանիոյ մէջ առաջին անգամ Էքօրն (Godefroy Eichorn) Գերման արեւելագէտ-պատմաբանն էր, որ յղացաւ լեզուները ցեղաբանօրէն բաժնելու գաղափարը՝ սկսելով Արեւելեան Ասիոյ միավանկային լեզուներէն մինչեւ Եւրոպայի բազմավանկային լեզուները և չուկէտ ունենալով միավանկայիններն, որոց բառերու արմատներն· աւելի որոշ կրնայ տեսնուիլ հարկաւ բազմավանկայիններէն, ուր արմատը դրեթէ անբեռոյթ վիճակ մը կը ստանայ։

Էքօրն, իր սոյն գաղափարը չկրնար իրագործել, երբ հետզհետէ տրմատներ երեւան գային, և կամ մարդն ցայժմ հետամուտ ըլլար արմատներ հնարելու։ Հետեւաբար, նոր գաղափար մը՝ նոր արմատ մը ստեղծելու չ'ստիպեր մարդը, այլ արդէն գտնուած արմատներուն առադրութեամբ գոյութիւն կուտայ բառի մը, բոլորովին նոր, որ նոր գաղափարին նշանակութիւնը դուրս կը ցոլացնէ։

Նախ Սեմական լեզուներ անուանին տակ հաւաքեց Եբրայական և ուրիշ լեզուներ, որոնք կցորդութիւն ունէին Եբրայականին հետ։ Բայց, 1808ին Շլէկել (Schlegel), իր մէկ երկասիրութեանը մէջ դիտել տուաւ թէ լեզուներէն ոմանք անճկելի (non susceptible de flexions), ոմանք մասնկաւոր (affines) և ոմանք ալ ճկուն (langues a flexions)։ Ասկէ յետոյ, Պոբ (Bopp), Գերմանացի բանասէրն, իր Բաղդատական Էթիմոլոգիական Հնդեւրոպական Լեզուներու անուն գրքով ոչ միայն լեզուագիտութեան խարխսիը լայնեց, այլ և ցոյց տուաւ լեզուի մեքենականութիւնն ու միջոցներն, որոց շնորհիւ մարդ իրենց կենաց զանազան պարագաներուն և յարաբերութեանց յարմար բացատրութիւններ կը ստեղծէ։

ԳԱՌՆԻԿ Ա. ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ

ԹՈՌՆՈՐԴԻՆ

(Վէպիկ)

(Շար. տես թիւ 6)

Օրէն մէկը Յոյնի գիւղէն անցած ատենը տան մը ներսերէն շինական անուշ երգի մը ձայնը կը հասնի ականջին։

Երգողին մեղմ և բարակուկ ձայնը՝ գրաւիչ շեշտ մը ունէր· սէգ Սարգիսին սիրտը կը վրդովէ· չի դիմանար և գէթ մոռիկ ընելու համար աւելի կը մօտենայ տնակին։

Երգին կտորներէն սա բառերը կը լսէ Սարգիս։

Մօրս կ'ըսեմ չի հասկնար,
Հօրս կ'ըսեմ չի հասկնար.
Աղբարս ըսես անտեղը չէ,
Ես ի՛նչ կ'ուզեմ չեն հասկնար։

Պէտքը չէ թեւիս պիլէզիք,
Նէ մէջքիս ոսկի քէմէր.
Նէ ալ ականջիս ոսկի օղ,
Ես կ'ուզեմ ինծի սիրող։

Աւէ՛ք տուէ՛ք, չեմ ուզեր,
Առէք տարէք ետ տուէք.
Անգամ մըն ալ մի բերէք,
Ես ինչ ուզեմ ան տուէք։

Ա՛խ, հերիք եղաւ ալ հերիք,
Իմ ուզած ինչո՞ւ չի բերիք.
Չէ՞ք գիտեր ես ի՞նչ կ'ուզեմ.
Սրտիս մօտիկ եար կ'ուզեմ։

Սարգիսի արիւնը գլուխը կը ցատկէ. մինչեւ այն ատեն չզգացածը կը զգայ, սիրոյ ծուղակին մէջ կը բռնուի եւ շատ գէշ կերպով. մէկ վարկեանի մէջ Եւայի աղջկան մը սիրամոլ երգը Սարգիսի սրտին մէջ սիրոյ ակ մը բացած է։

Սէրը յանկարծ կուգայ եւ ըրածը թողածը չի գիտեր ըսեր են. ալ Սարգիս իր անձին տէրը չէր, սիրոյ գերին եղած էր. ահա այդ յանկարծական սէրն էր որ ձիէն վար իջնելուն պէս դրանը ոտքի հարուած մը տալ կուտայ եւ չխտակ տանը խորը կ'ուղղուի։

Գետնին վրայ փռուած կապերտին վրայ ընկողմանած է Գալիպոլսոյ գեղջկուհի քոյրերէն մին, գեղուհի մը. — մատիկներովն ալ սեւ սատափի պէս փայփլուն մազերը կը խառնշտըկէր։

Ահա այդ գգլխիչ դիրքին մէջ Սարգիս վրայ կը հասնի։

Գեղուհին՝ Սարգիսը տեսնելուն պէս ոտքի վրայ կը ցատկէ։ Սարգիս զինքը չէր ճանչեր, սակայն ինք կը ճանչէր զայն. Սարգիս արդէն հանրածանօթ էր։

Հելլենուհին ինքնապաշտպանութեան համար անմիջապէս թոնիրի երկայն ակիշ մը խլած էր։

Սարգիս խնդաց։

Վարկեան մը հարցական նայուածքով երկուքն ալ իրարու նայեցան. եւ վերջապէս Յոյնուհին ըսաւ.

— Ի՞նչ կ'ուզես։

— Քու ուզածդ։

— Ի՞նչ է իմ ուզածս։

— Սրտիս մօտիկ եար կուզեմ... ահա՛ ես։

Հռումին աղջիկը շիկնեցաւ. յիշեց քիչ մը առաջուան երգածը։ Աչուկները խոնարհեց, ձեռքի ակիշը վար ինկաւ։

Սիրոյ ծարաւի էր գեղուհին։

Խստակեաց եւ կրօնամոլ ծնողաց զաւակ ըլլալուն, շատ անգամներ արտը, դաշտը կամ ջաղացքը երթալու ատեն վրայէն կը կըպէին խեղճ աղջկան։ Վանդակին մէջ բանտարկուած թռչնիկի մը համար ազատութիւնը որչա՜փ անուշ կը թուի. եւ արգիլուած քաղցր պտուղի մը լոկ տեսքը գեղուհիի մը ներսիդին ի՞նչ ըղձալի ախորժակներ կը սրէ։

Խեղճը այսպէս շատ հեղ տանը մէջ մինակը միտքով տղայուց սորված Հայերէն Ռերթ Յունարէն սիրային երգեր կ'երգէր. այդ երգերը սրտին համար հողմահար եւ իր անձին համար անմեղ ժամանց մըն էին։

Իր բարեձեւ հասակը. մանր դիւթիչ աչուկները, կաթնախմոր թշիկները, հապա՛ այն թուշը եւ ձիւնի պէս ճերմակ վիզը տեսնողներ չէին եղած տակաւին։ Իր գիւղին բալիքարեանները անգամ չէին գիտեր թէ Բանաէլի աղան հասուն աղջիկ մը ունէր։

Երազած, երեւակայած, երգած եւ խնդրած սրտի մօտիկ սիրողը՝ Սարգիսէն զատ ուրիշը չէր կրնար ըլլալ։

Պահ մը վերջ Յոյնուհին գլուխը վեր առաւ. անգամ մըն ալ իրարու նայեցան. երկուքին ալ նայուածքը շեշտակի իրարու աչքից մէջ ուղղուած էր, հրատոչոր էին, կը փայլէին, վարկենապէս աչքերով կարդացին մէկմէկու սիրտը. եւ միեւնոյն ատեն երկուքին վրայէն ալ թեթեւ եւ անցողակի սարսուռ մը անցաւ։

Սիրոյ հրեշտակը անցած էր վրանուն։

Սիրտը սիրոյ բոցովը փանկած, աչերը խնդութեան արցունքով լեցուած, վրան մարմրուք մը եկաւ աղջկան։

Սիրահարի մը համար ամէնէն աւելի պատեհ առիթն էր. Սարգիս անմիջապէս գրկեց եւ բազուկներուն վրայ առաւ սլտիկ մա-

նուկի մը նման․ կուրծքին սեղմեց անգամ մը և ճակտէն համբոյր մը առնելով սկսաւ օրօրել։

Վարկեան մը վերջը սիրուհին աչքերը բացաւ․ ո՜հ, այս ի՜նչ նայուածք․ ես ըլլայի Սարգիսը․

Սարգիս չի դիմացաւ, աչուկներուն ալ պաչիկ մը տուաւ։

Խեղճ աղջիկը խօսիլ կ՚ուզէր չէր կրնար․ ըրաւ չըրաւ ա՛խ մը թռուց բերնէն — սկիզբն սիրաբանութեան․

— Անո՛ւնդ, անո՛ւնդ․

— Մա՛ րի՛ քա՛․

— Խօսէ, Մարիքա՛ս․ խօսէ․

— Ի՞նչ եղայ ես։

— Դուն ըսա՛, անո՛ւշս, դո՛ւն․․․ ի՞նչ եղար․

— Ա՜խ․․․ ի՞նչ գիտնամ․ սիտեղ․․․ սիրտս բան մը եղաւ․

— Ի՞նչ եղաւ, ըսա՛․․․ չո՛ւտ։

— Ես ալ չեմ գիտեր․․․ մէկէն բան մը եղայ․․․ սիրտս ելաւ իջաւ․․․ ինքզինքս կորուցի․․․ դո՛ւն, դո՛ւն․․․։

— Ե՛ս․․․ ես ի՞նչ։

— Ինչո՞ւ էկար դուն։

— Դուն կանչեցիր․

— Ես կանչե՜ցի․․․։

— Հապա՞․․․ դուն չէի՞ր սրտիս մօտիկ եար կ՚ուզեմ ըսողը․

— Որո՞ւ․․․ որո՞ւ ըսի․

— Քեզ սիրողին։

— Զիս սիրողի՜ն․․․ ո՞վ է, ըսա՛, ո՞վ է զիս սիրողը․

— Որո՞ւ թեւերուն վրայ թառեր ես։

— Ա՜խ․․․ բանայիամո՛ւ։

— Ինծի համար քենէ աղէկ բանայիա՞․

— Թո՛ղ զիս Աումէն, թո՛ղ։

— Ե՞ս․․․ թողում քեզ․ չե՞ս գիտեր որ միդէւադ բատէրադ Աւմէնին համար մեծցուցեր են քեզ․

— Ա՜խ, Աստուած իմ, ի՞նչ արի ես։

— Բան մը չարիր Մարիքա՛ս․ սիրտդ տուիր ինծի, հասկցա՞ր․

Մարիքայի վրայ երկրորդ նուաղում մը եկաւ․ Սարգիս գրկէն վար դրաւ և կապերտին վրայ երկնցուց։

Պահ մը ետք սթափեցաւ․ սկիզբէն ըրած շատ տկար դիմադրութիւնը հալած էր․ երբ աչքերը բանալով Սարգիսը ծնկան վրայ եկած տեսաւ քովիկը, բացաւ թեւերը — հրաւէր մը առ Սարգիս․

Սարգիս խկոյն այդ սիրազեղ թեւերուն մէջ նետուեցաւ, և անմեղ դիրկընդխառնումով մը իրարու փարեցան․․․։

(Շարունակելի)

ՔԱՐՈՂ

ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ

ԲԱՍԹԷՕՈՒԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ

(Շար. տես թիւ 6)

Շերամին անդամազննութիւնը եւ բնախօսութիւնը․ — Շերամի թրթուրը հաւկիթէն դուրս ելլելէն քիչ մը վերջը 2 հազ․ մեթր երկայնութիւն ունի արդէն և չափազանց մազեղ կ՚ըլլայ, բայց քանի մեծնայ, այնչափ կը լերկանայ մարմինը։ Մորթը ընդհանրապէս գորշ սպիտակ է, կամ դեղնագոյն սպիտակ և կամ կապտագոյն սպիտակ, և այն ատեն, հազիւ թէ մէկ քանի սեւ մազեր ցցուած պիտի տեսնէք հոս հոն․ թէեւ մազերու թիւը պակսած չէ, բայց կենդանին քանի մեծնայ, մազերը իրարմէ հեռանալով ցանցառ կ՚երեւին։

Մարմինը բաղկացած է 12 անրակներէ առանց հաշուելու գլուխը։ Առաջին 3 անրակները իրարու խիստ մօտ, կը կրեն իրենց ներքեւը 3 զոյգ յօդուածաւոր տոտիկներ, որոնք մնայուն են թիթեռնիկի կեանքին մէջ, և 6, 7, 8 և 9րդ․ անրակներն ալ կը կրեն 4 զոյգ կեղծ տոտիկներ որոնք թըրթուրին մորթին հետ կ՚անհետանան, խորխայումի ատեն։ Առաջին 3 անրակները ունին շատ մը կատարներ (խլիկ) և ծալքեր մորթին մէջ, և զուգադիր սև բիծեր․ 5 և 8րդ անրակները ունին նաեւ ուրիշ բիծեր եւս․ վերջապէս վերջին անրակին վրայ ալ կը գտնուի եղջիւրիկ մը․

Առաջին 3 անրակները որ յօդուածաւոր 3 զոյգ մնայուն տոտիկները կը կրեն, միջատին այլակերպութեան ժամանակ իբր զօդուելով, թիթեռնիկին կուրծքը կը կազմեն։ Այս տոտիկները 4 յօդուածներէ բաղ-

կացած են, որոնց վերջինը կը ներկայէ եղունգը, որակիչի մը պէս կոր և սրածայր է ։ կենդանին քալելու համար կը գործածէ իր այս 3 զոյգ ոտիկները և կեղծ ոտիկներէն վերջին զոյգը ։

Թաղանթային կամ որ նոյնն է՝ կեղծ ոտիկները յօդուածաւոր չեն․ ասոնք աւելի մաշկէն կազմուած ստնքաձեւ ուռեցքներ են, որոնք վերջաւորած են ճանկաւոր եւ կարծր մազերէ ։ Թրթուրը այս կեղծ ոտիկներով է որ օտար առարկաներու վրայ ուժգնապէս կը կառչի ։

Գլխուն վրայ կը գտնուին աչքերը, բեղկուկներ, բերնին գործարանները և կորզանը (թել չինող գործի)։ Բեղկուկները և աչքերը անկատար վիճակի մէջ են, և այս պատճառաւ շատ չերամաբոյծներ կը կարծեն թէ անոնք կոյր ըլլան, որ թէև չեն իսկապէս, բայց իրենց տեսողութիւնը շատ մթագին է ։ Աչքերը կազմուած են 6 սեւ և փոքր կէտերէ, և զետեղուած գլխուն առաջնակողմի երկու քովերը․ և մեղուներու կամ ուրիշ թաղանթաթեւ միջատներու աչքերուն պէս պարզ աչքեր են ։ Բայց այլակերպութենէն վերջը, աչքերն ալ բարեփոխուելով, թիթեռնիկը կ'ստանայ բազմակողմանի և բաղկացեալ աչքեր, որոնցմով տեսողութիւնը կատարեալ կ'ըլլայ ․

Բեղկուկները՝ որ կատարելութեան ժամանակ նրբին և փափուկ փետուրներու ձեւը կ'առնեն, բաղկացած են ծայր ընդ ծայրի զօդուած 3 ուրոյն կարճ և կոնաձեւ հատուածներէ, որոնց վրայ կը համրուին 40 որոշ փետրաձեր (փետուրները կազմող մանր և բարակ մազերը)։

Բերանը կը բաղկանայ նախ վերին շըրթունքէ մը կարծր և խեցեկերպ կազմուածքով, որ վերջաւորութիւնն է գլխուն ճակատաձեւ մասին․ երկրորդ՝ լայն և ատամնայեռ զոյգ մը ծնօտներէ և երրորդ ստորին շրթունքէ մը ։ Կորզանը այս վերջինին մէջ կը գտնուի, որ փոքրիկ յօդուածաւոր կտուց մ'է, և կը կոչեն մետաքսի պատիճ (խորթում), որուն զօդուած է բերնի խոռոչին մէջ գտնուած խողովակաձեւ անցքի մը ծայրը, ուրկէ դուրս կ'ելնէ մետաքսեայ թելը ։

Ասոնցմէ զատ բերանը ունի նաև երկու զոյգ մօրուսիկներ․ առաջին զոյգը կազմուած է 3 յօդուածներէ, և կը կոչուին ծնօտային շօշափուկներ կամ մօրուսիկներ, մինչդեռ երկրորդ զոյգը միակտուր է, և կը կոչուին շրթնային մօրուսիկներ․ և շատ հաւանական է որ ասոնք միջատին շօշափման զգայարանքները ըլլան, և թերեւս ալ ճաշակելեաց, որ կը ծառայեն թրթուրին իրր շօշափելի․ և իր սնդեան տրուած տերեւները բերնին մօտ բռնելու ։

Բերնի խոռոչին կը յաջորդէ մարսողութեան կազմածը, որ կը բաղկանայ որկորէ (պօղազ, էզօֆաժ) մը և ստամոքէ մը; որ թաղանթային երկար պարկ մ'է, որուն վերի ծայրը մուտ կծիկ մը կայ, իսկ վարի ծայրը խեղդուած, աւելի նեղնալով կը շարունակուի անկէ անդին երեք գնդաձեւ ուռեցքներով, որոնց առաջին, երկրորդ և երրորդ աղիք անունը կուտան։ Երկրորդ աղիքին մէջ կը բացուին փոքրիկ խողովակիկներ– երկայն և վէտակոր, որ կը կոչեն չերամաբոյծները Լիօնէի՝ Եբրաղի (պաղըրսաք), կամ մաղձային խողովակներ կամ Մալբիկիի խողովակ ։ Այս խողովակները կը ներկայացնեն միևնոյն անգամ լեարդի և երիկամանց (գարաճիյեր եւ պէօվրէկ) անկատար նմանութիւնները։ Վերջապէս խոշոր աղիքը կը յանգի վերջին պարկի մը, որ կը վերջանայ սրբանով․

Մետաքսաբեր գործարանը որ կը յանգի կտուցին վրայ, և կամ աւելի ստորին շըրթունքին վրայ գտնուած կորզանին ծայրը, և որ միջատին ամենէն կարեւոր և էական մասը կը ներկայացնէ, կ'արժէ անշուշտ որ, մանաւոր բացատրութիւն մը տանք անոր վրայ ։

Գլխաւորապէս կազմուած է անկիա երկու խոշոր խողովակներէ, որոնք գլխագիր (Տ) ի պէս ձեւ մը ունին, և ստամոքին տակովը և երկու կողմը զետեղուած են, 4րդ և 8րդ անրակներուն մէջտեղը, ասոնք կը կոչուին մետաքսի ընդունարան ։ Իւրաքանչիւր խողովակի վարի ծայրը բարակնալով, և խիստ վէտակոր (զիկզակ) ձեւով և պարկատակով (գիւ-տը-սաք, ծայրը դոցուած) վերջաւորուած 9րդ և 10րդ անրակներուն մէջ պարփակուած կը գտնուին ։ Եւ կը կոչուին Երփոդրակներ մետաքսի նախնական

նիւթերը կը պատրաստուին անոնց մէջ։ Ընդունարաններուն վերի ծայրերը նոյնպէս բարակնալով կ'անցնին դէպ առաջ, կը միանան և կը կազմեն մետաքսաբեր խողովակը, որ կ'երթայ վերջնականապէս բացուիլ կորզանին մէջ։

Այսպէս ահա մետաքսեղէն նիւթը նրփողրակներէ արտասրելով կը մթերին ընդունարաններուն մէջ, չերամի տեսակին համեմատ դեղին կամ ճերմակ գոյնով և մածոյցի պէս լպրջային երեւոյթով, և ընդունարաններէն անցնելով կ'երթան դէպ ի կորզան, ինչպէս ըսինք, բայց հոն հասնելէն առաջ երկու նոր նիւթերու ազդեցութեան կ'ենթարկին։ Առաջին երեք անրակներուն երկայնութեամբը զետեղուած կը գտնուի երկայնաձեւ այտուց մը, վարի ծայրը գոց, իսկ վերի ծայրը բարակնալով կ'երթայ յանդիլ կորզանին մէջ։ Ասիկա ալ կը կոչուի յուծող այտուց, որ մասնաւոր նիւթ մը արտադրելով, կորզանը հասած մետաքսային նիւթը կը թանայ. զայն լուծելի և համասեռ կ'ընէ, և երկու նրփողրակներէն ելած մետաքսային նորակազմ թելերը ի մի ձուլելով, անոնց միապաղաղ երեւոյթ մը կուտայ։ Վերջապէս ուրիշ փոքրիկ խողովակիկ մը կորզանին մէջ կը հոսեցնէ Ալզաւէֆի փեղծին արտադրած կաէզը (զամխի նման փայլունութիւն տուող նիւթ մը), որ մետաքսէ թելը փայլեցնելու սահմանուած է, և շնորհիւ այդ կաէզին, մետաքսը փայլուն ըլլալէ զատ, բացի բարկ թթուներէ և ալքալիներէ (սօտա, բօթաս). ուրիշ հեղուկներու մէջ ալ չի հալիր։ Կորզանը իր կարգին խիստ բաղադրեալ գործի մ'է։ Վերը յիշուած խողովակներու ծայրերէն զատ ի միջի այլոց մետաքսաբեր խողովակի տակէն և վրայէն մկանունքի շարք մը կայ, որոնք քիչ շատ այդ խողովակը ճնշելով, մետաքսեղէն նիւթին անցքը կը ճշդեն թելին տրամագիծը սահմանելու համար։ Ամեն միջատներու պէս, թրթուրին շնչառութիւնն ալ մորթային է, և կը կատարուի 1, 4, 5, 6, 7, 8, 9, 10 և 11րդ անրակներու վրայ կողմնակի բացուած շնչածակերու միջոցաւ։ Ասոնցմէ օդը ներմուծելով կ'անցնի հիւսկեններուն մէջ անհունապէս ճղաւորած և առաձիգ ծնրակապերու նմանող երակներու միջոցով։ Ասոնք թրթուրին շնչափողերն են։

Առաջին անրակէն մինչեւ 11րդ անրակը երկնցած է կռնակին տակէն փողրաձեւ անօթ մը, որ կը վերջանայ պարկատակով մը 11րդ անրակին սկիզբը, ծրուն վերի ծայրը նեղ, բայց 4րդ անրակէն սկսելով շատ մը փորակներու (սրտի խուց) կը բաժնուի, որոնք մէկզմէկու կը հաղորդակցին և նրբին երակներու արձակներով արիւնը կը ղրկեն մարմնոյն երկու կողմերը, ուր շնչանօթներու մօտ թթուածինի յաւելակետն ընդունելով, կը տարածուի մարմնոյն ամեն կողմը։ Այս է միջատին արիւնը, որ անգոյն է, և կը շարժի այդ բնդողնային անօթին մէջ, և այս վերջինն ալ անոր տիրար կը ներկայանէ։

Այս ընդողնային անօթին ճիշդ դիմացը և մարսողութեան խողովակին առակովը ջղային զոյգ մը լար կը գտնուին, որոնք իւրաքանչիւր անրակին միջովը մէկմէկ ուռեցներ կը ներկայացնեն, որոնք դիմացէ դիմաց հաղորդակցելով, աջ ու ձախ ջղային նրբիլարեր կ'արձակեն, որոնք կ'երթան թափանցել գործարանակազմութիւնը։ Այս այտուցներուն առաջին զոյգը գլխուն մէջ զետեղուած կը ներկայեն ուղեղը։

Կատարեալ մկանային դրութիւն մը ունի, թրթուրը, բայց սերնդագործութեան կազմածը կը պակսի, որ մի միայն կծիծ ըլլալու ժամանակ կ'սկսի երեւիլ։

Միզային դրութիւնը իր գործարանակազմութեան մէջ բաւական ընդարձակ տեղ մը կը բռնէ, բայց միզային արտասրում դրեթէ չունի. մինչդեռ կծիծային վիճակին մէջ, և ալ աւելի երբ թիթեռնիկ է, միզային առատ արտասրում մը տեղի կ'ունենայ, շիկագոյն կամ դեղնորակ և պղտոր հեղուկի մը ձեւով, զոր կ'արտավանէ զուգաւորութենէն առաջ կամ յետոյ։

Թրթուրը երբ կծիծի վիճակին կը փոխուի իր ներքին գործարանակազմութեան մէջ մեծ յեղաշրջումներ յառաջ կուգան. տակաւ մետաքսը արտադրող կազմածը կ'աներեւութանայ, անրակները կը կարճնան և կը պօղուին իրարու, այնպէս որ գլուխը որոշ ձեւ մը կ'առնէ զարդարուած զոյգ մը փետրալիր բեղկուներով, որուն կը յաջորդէ քառաթեւ իրան մը, յետոյ որովայն

մը, որուն կեղծ տոտիկները անյայտացած են, և կը վերջանայ սերնդագործութեան կազմածին արտաքին մասերով։

Մարսողութեան խողովակը զգալապէս կը կարճնայ, բերնի ծամող գործիները այլ ևս գոյութիւն չունին, որովհետև թիթեռնիկը այլ ևս չը պիտի ուտէ։ Թիթեռնիկի արուն կ'որոշուի էգէն, իր սէգ թափով․ խոշոր աչքերով, սանտրաձևերպ փայլուն բողկուկներով, որոնք աւելի երկայն և մշտագոյն են․ Հաւակը աւելի փոքր է և ունի 22-25 հազ․ մեթր երկայնութիւն, մինչդեռ էգինը կը չափուի 38-42 հազ․ մեթր․ և առր որովայնը աւելի լայնածաւալ է քան էգինը։ Եւ ինչպէս ըսինք, սերնդագործութեան կազմածը կը կատարելագործի երբ միջատը թիթեռնիկ կ'ըլլայ․ արուին կազմածը կը բաղկանայ երիկամնաձև զոյգ մը գեղձերէ, որոնք կը ներկայացնեն ամորձիքները, որոնցմէ 2 արտածիչ խողովակներ մեկնելով, իրենց ճամբուն մէջ կը միանան և կ'երթան յանգիլ սերմնային փամփուշտի մը ծայրը, ուր կը մթերի իրենց արտածոյքը։ Այս սերմնային փամփուշտին կը յաջորդէ սերմնաղի մը, որ իր մասին կը յանգի ծննդական գործարաններու արտաքին մասին վրայ․ որոնք առնանդամը, տեղաւորուած սրբանին տակը, և որուն երկու կողմը կը գտնուին զոյգ մը զուգաւորիչ ակիշներ, որոնք կը ծառայեն զուգաւորութեան ատեն առնանդամը, իգական ծննդային գործարանին մէջ հաստատ բռնելու։

Իգական ծննդային գործարանները կը բաղկանան գլխաւորապէս զոյգ մը ձուարաններէ, որոնք կազմուած են պարկատակ խողովակներու տրձակներով, որ կը պարունակեն իրենց մէջը հաւկիթները։ Այդ տրձակները միանալով կը կազմեն ձուանցը որ ծննդական գործարանի արտաքին մասին վրայ կը վերջանայ։

Այս է ահա շերամի անդամազննական յօրինուածքը իր այլ և այլ վիճակներուն մէջ, որ թէև համառօտակի, բայց ըստ կարելոյն կրնայ նպաստել շերամաբոյծերու մասնաւորապէս շերամի հիւանդութեանց մասին ախտաբանական ուսումնասիրութիւններու համար։

Մտնենք հիմա բուն շերամաբուծական խնդրոյն մէջ, և պարզենք հետզհետէ մեծանուն Բասթէօռի դրութեան վրայ հիմնուած մշակութեան ընտրելագոյն եղանակները, հիւանդութիւնները, անոնց առաջքը առնելու հիմնական միջոցները, ևլն։

(Շարունակելի)

Ղ. ՔՈԼԱՑ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶԸ

Ազնի՛ւ ծնողներ, դուք որ ձեր զաւակաց մտաւոր և բարոյական զարգացմանց հոգ տանելու սրբազան պարտականութիւնն ունիք, և թերևս շատերնիդ ալ պարտքերնիդ լիովին ու անթերի կը հատուցանէք, հապա ինչո՞ւ կը մոռնաք և կամ այն է զանց կ'ընէք մարմնաւոր զարգացումը։ Միտքը մշակել, զօրացնել կը ջանաք, մարմինը անզօր ու տկար կը թողուք։ Մտաւորին համար փոյթեռանդ կը գտնուիք․ իսկ մարմնաւորին համար անփոյթ։ Միտքը ճոխ ու հարուստ, մարմինը փուտ ու փտտած՝ ոչինչ կ'արժէ շիտակը և կը նմանի այն փիզիքապէս քայքայեալ հարուստին, որուն՝ ունեցած նիւթականը աչքին երբէք չ'երևար մարմնապէս խանգարուած ըլլալուն համար։

«Առողջ միտք առողջ մարմնոյ մէջ» ըսուած է, պէտք չէ մոռնալ այս։ Արդարև ի՞նչ կ'արժէ կեանքը առանց առողջութեան․ տանջանք մը և կամ ծանր բեռ մը ուսերու վրայ, այնպէս չէ՞․ Հետևաբար առողջութիւնը թանկագին գանձ մը և երջանկութեանց ամենէն գերագոյնն է, որուն արժէքին ու յարգութեան վրայ չենք գիտեր գուրգուրալ․ անոր յարատև պահպանման համար չենք գիտեր խնամքով վարուիլ, ինչ որ մեր նախնական պարտաւորութեանց առաջինն կ'արժէ համարուիլ։ Ո՛վ դաստիարակներ․ դուք որ մտաւոր յառաջդիմութեան անխոնջ մշակներն էք, դուք ալ ձեր բաժինը ունիք ըսածներէս, վասն զի մարմնաւոր կրթութեան պէտքը չէք շօշափած․ գիտցէք թէ ձեր հոգածու խնա-

մոց յանձնուած գաւակները մեծաւոր մարզանքէն աւելի մարմնաւորին պէտք ունին, ինչու որ մեծաւոր առողջութիւնը մարմնականէն կախում ունի։ Ա՛րդ, ծնողներ և դաստիարակներ, ձեր այս պարտազանցութեան սա թերութեան ի տես, հարկ անհրաժեշտ կը համարիմ մարմնաւոր կրթութեան կարեւորութիւնը յիշեցնել, և այս առթիւ գիտութեան լայնածաւալ սահմանէն դիւրըմբռնելի մի քիչ ծանօթութիւններ կորզելով ձեզ նուիրել։

Մարմնամարզը թէպէտեւ Ֆրանսայի մէջ 1869 թուականին պաշտօնապէս վարժարաններու բեռոկռամին մէջ ներմուծուած է, սակայն անոր օգտաւէտ և փրկարար ծառայութիւններն գրեթէ տասը տարի վերջը ապացուցուելով, 1880ին սոյն ֆիզիքական կրթութիւնը ստիպողական դարձած է առհասարակ ամենուն համար։

Նախ ըսեմ թէ մարմնամարզի շնորհիւ արեան շրջանը կ'արագանայ, այսու երակներուն մէջ գտնուած արիւնը իր պարտականութիւնը դիւրութեամբ կը կատարէ, և մարմնոյն մէջ իր հաւասարակշռութիւնը հաստատուն կը պահէ, այսինքն մարմնոյն՝ մինչեւ ամենափոքր մասնիկներուն իսկ արիւնը պէտք եղած հաւասար չափով կը բաշխուի։ Եւ որովհետեւ մարմնամարզի միջոցաւ արիւնը ամեն տեղ չափաւոր կերպով կը բաժնուի, երբ արեան կեդրոնացման մը հաւանականութիւնը կը ներկայանայ, յայտնի բան է որ մարմնամարզը այդ հաւանականութեան հանդէպ յաղթող կը հանդիսանայ։ Շնչառութիւնն ալ կը դիւրանայ, նոյնպէս մարմնոյ ջերմաստիճանը կը կը բարձրանայ, ախորժակն ալ կ'աւելնայ, մարսողութիւնը կը դիւրանայ, և դնդերային դրութիւնը կը զօրանայ և կը բարգաւաճի։ Երբ մարմնամարզ կ'ընենք մեր դնդերներն են որ կը գործեն, այն այլազան շարժումները մեր դնդերներու միջոցաւ կը կատարենք, որովհետեւ մեր դնդերները մեր կամքի հրամանին տակ կծկուելու (contraction) և թուլացման (extension) յատկութիւններ ունին. այս յատկութիւններն երբ տեղի ունենան, ակներեւ է թէ շարժում մը երեւան կուգայ, որուն միջոցաւ դնդերները կը զօրանան, ուրեմն պէտք չէ որ դնդերները երկար ատեն անշարժութեան տակ ձգուին, որովհետեւ երբ անշարժ պահուին, հետզհետէ դանդաղութեան կը մատնուին և կը ծիւրին. ընդհակառակն եթէ աշխատութեան շարժման մէջ ըլլան, արդէն ունեցած ուժերնին կը կրկնապատկուի, արդէն դէպի այն դնդերները կը խուժէ առատօրէն, և այս պատճառաւ տաքութիւն առաջ կուգայ, հետեւեալ ամենապարզ օրինակը կը բաւէ ընթերցողները համոզելու համար. ինչո՞ւ ձմեռուան ցուրտին երկու ձեռքերնիդ իրարու կը շփէք երբ մնած ըլլան։ Վերջապէս մարմնական ամբողջ շարժումները կը կանոնաւորին, այսպէս մարմինը թեթեւաշարժութիւն մ'ալ կ'ստանայ։

Մարմնամարզը պատանիէն սկսեալ մինչեւ ծերը ամեն տարիքի ալ կը պատշաճի, պայմանաւ որ չափաւորեալ սահմանի մը մէջ գործածուի։

Ամեն ոք պէտք ունի մարմնամարզի՝ կուրծքի ծաւալը ընդարձակելու և այսպէս շնչառութեան կեդրոնին՝ թոքերուն գործը դիւրացնելու համար։ Մերերն ալ պէտք ունին, զգայակորոյս նեարդաց (fibres) պարտականութիւնը դրդռելու համար. սակայն հասուն տարիքի տէր մարդոց պէտք է արդիլել ծանր մարզանքները, այլ թեթեւ շարժումներ միայն թոյլատրել։

Մարմնամարզը զօրաւոր սեռէն աւելի փափուկ սեռին հարկաւոր է, որովհետեւ արք քիչ թէ շատ շարժման մէջ կը գտնուին իրենց զբաղմանց պահանջումով. իսկ իգական սեռը օրուան գրեթէ մեծ մասը նստելով կ'անցնէ։ Եւ այս առթիւ պէտք է գիտնալ որ մարմնամարզը անշարժ կեանք վարողներու և նստողական զբաղմամբ պարապողներու համար կենսական անհրաժեշտ պէտք մ'է։ Տկար սեռին համար կը բաւէ միայն քաղցրամեղմ շարժումներ կատարել, որոնք անդամները դիւրաշարժ վիճակի հասցնելէ զատ, կուրծքը՝ ընդարձակելու երիկամունքը (reins) ուժովցնելու կը նպաստեն։ Հետեւաբար մարմնամարզը կազմութեան, տարիքի և սեռի համեմատ պէտք է ի կիր առնուլ. իսկ եթէ դարմանարանական տեսակէտով կատարել հարկ ըլլայ, այդ ատեն հիւանդին ուժին չափը, հիւանդու-

թեան բնութիւնը և ծագումն ալ մասնաւորաբար նկատի առնուելիք կէտեր են։

Ամեն օր կը բաւէ կէս առ առաւելն մէկ ժամ մարմնամարզով պարապիլ. անոնք որոնք մարմնամարզի յատկացնելու քիչ ժամանակ ունին, աւելի լաւ է այդ քիչ ժամանակուան մէջ միայն մարմնոյն վերի մասերը մարզեն, վասն զի վարի մասերը արդէն քալելով միշտ կը մարզուին։

Մարմնամարզը ընդհանրապէս պէտք է կատարել ճաշէ գրեթէ երկու ժամ առաջ և կամ թէ ճաշէ երեք ժամ վերջը, որպէս զի մարսողութեան խանգարման տեղի չի տրուի։

Տարուօք մարդերը, յօդուածաւորները (rhumatisants) ջղայինները (nerveux) առաւօտ և երեկոյ ճաշերէ առաջ, գիրապարարները, (obèses) յօթատապոտները, (goutteux) առաւօտները անօթի, աւշայինները. (lymphaeiquts) անարիւնները (anémiques) շաքարախտաւորները (diabétique) ճաշէ առաջ պէտք է մարմնամարզ կատարեն։

Մարմնամարզը ընդհանրապէս մարզարաններու մէջ կը կատարուի, թէպէտև այլուր հոյակապ մարզարաններ կառուցուած են, բայց մեր տեղւոյն համար կը պակսին. այսու հանդերձ առ ի չգոյէ մարզարաններու ամեն ոք կարող է մասնաւորապէս իր տան մէջ մարզանք կատարել։ Արդ ի դիւրութիւն մարզողաց կը փութամ հոս ներկայացնել օգտաւէտ միջոցներ, որք ամենուն ալ մատչելի ըլլալու հանգամանքէն զուրկ չեն։

Մարմնամարզը երկու տեսակ է, մին պարզ շարժումներէ կը բաղկանայ, օրինակի համար, ոտքերը թեւերը յառաջակողմ և յետնակողմ շարժել, քալել, վազել, ցատկռտել, պարել, լողալ, ձի հեծնել, փայտ ճեղքել և սղոցել, հնձել, հող փորել, թիավարել ելն. առանցմէ զատ կրնանք նաև հետևեալ ամենապարզ ձեւն ալ գործածել, առաստաղէն կախուած՝ ծայրերը երկու երկաթեայ օղակներով երկու չուաններ՝ իրարմէ գրեթէ մէկ կանգուն հեռաւորութեամբ. առաւօտները պէտք է այս օղակներէն բռնելով առաջ ետեւ օրօրիլ և մարմինը վեր քաշել, վեր թողուլ և այսպէս կրկնակի։ Այս տարբեր շարժումներուն կարելի է կցել նաև կից գնդիկներով (haltères) կատարուած մարմնամարզը, որ երբեմն ըսպառուածէն աւելի սքանչելի արդիւնքներ առաջ կը բերէ, թէպէտև քիչ մը յոգնեցուցիչ է, սակայն կրնայ ի գործ դրուիլ բնակարաններու մէջ։ Իսկ միւս տեսակը կանոնաւոր շարժումներէ կը բաղկանայ, որոնց բուն մարմնամարզ (gymnasdique proprement dite) անունը կը տրուի որ գործիքներու միջոցաւ կը կատարուի, օրինակի աղագաւ, տրապիզ, զուգահեռական, ձող, շարժուն սանդուղ, պարզունակ, լախտ ելն. այս մասին ծանօթութիւններ տալ ձեռնհասութենէս վեր և մասնագէտներու պարտքն ըլլալուն զանց կ'ընեմ. իսկ եթէ ընթերցողք իրենց հետաքրքրութիւնը աւելի հեռուները տարածելու փափաքն ունենան, այն ատեն Ժօժէն Բազի (La gymnastique raisonnée)ին դիմելու պատուէրը տալով կը շատանամ (*)։ Մարմնամարզի նորեկները առաջին օրերուն մէջ ամենէն աւելի պարզ և անխոնջեցուցիչ մարզանքներ միայն պէտք է կատարեն; և յետոյ աստիճանաբար յառաջ դիմելով տասն և հինգ քսան օրէ վերջ ամեն տեսակ շարժումներ կատարելու են։ Առջի օրերուն մէջ մարմնամարզը թէպէտև մարմնոյ թուլութիւն կը պատճառէ, սակայն մէկ քանի օրուան մէջ կ'անհետանայ, և աւելի տարիքոտներու զգալի կ'ըլլայ. եթէ այդ թուլութիւնը տաքութեան մը հետ ընկերացած շարունակէ, մարմնամարզը մի քանի օր դադրեցնել հարկ է։

Պէտք չէ կարծել որ մարմնամարզը մի միայն առողջներու կը պատշաճի, իսկ վատառողջներու ոչ, ընդհակառակն երբ մարմնամարզը իբր դարման կը ներկայացնենք Փիզիքական կրթութեան համար, աւելի անհրաժեշտ և անխուսափելի պէտք է նկատենք տկարակազմներու համար, գործածութեան մէջ առանց չափազանցութեան հաւնելու պայմանաւ սակայն։

Հետեւաբար կ'արժէ, այնպէս չէ՞, ազնիւ ընթերցող, մաքին հետ մարմինն ալ մարզել։

Ա. ԽԱՆՃԵԱՆ

(*) Մեր մէջ միակ հրատարակութիւնը՝ բժիշկ Տէրերի «Առողջապահական մարմնամարզութիւնը» կրնանք յանձնարարել:
Ծ. Խ.

ԳԻՏԱԿԱՆ ՔԻՌՆԻՔ

ՈԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԻՆԵՐ

(Շար. թիւ 6եԱ եւ վերջ)

Տանձօղին, խնձորօղին ալ տանձին և խնձորին պարունակած շաքարի հիւթերուն խմորումէն յառաջ եկած ըմպելիներն են։ Վերջապէս տակաւին կան ոգելից ըմպելիներ ինչպէս վօթկան որուն գործածութիւնը Ռուսիոյ մէջ ընդհանրացած է, վարսակէ եղած ըմպելի մ'է և հետեւեալ կերպով կը պատրաստուի։ Վարսակը ծանօթ է մեզ իր ունեցած օսլայովը, քիմիական հակազդակներու և խմորիչներու շնորհիւ նախ օսլան շաքարի կը փոխեն, յետոյ այսպէս շաքարի փոխուած հեղուկը, խմորումի կազմ ու պատրաստ վիճակի մէջ գտնուելով ատկից ալքոլներ յառաջ կը բերեն. սակայն ամենն ալ վերին ալքոլներ են և ամենէն վնասակար և թունաւոր նիւթերը կը պարունակեն (որովհետեւ շաքարը, օսլան և խաշանիւթը, գրեթէ միեւնոյն դասակարգէն են, իրարմէ քիմիապէս ջրային շամանդաղներով կը տարբերին. շաքարը պտղանոյշէն (կլիւքօզ) ջրի մասնիկ մը պակաս ունենալէն կը տարբերի, օսլան՝ շաքարէն երկու ջրի մասնիկ պակաս ունենալէն կը տարբերի, խաշանիւթը (սէլլիւլօզ) օսլայէն քանի մը ջրի մասնիկներ պակաս ունենալով կը զանազանուի։ Արդ պէտք եղած ջրի մասնիկները մասնաւոր խմորիչներու (ֆէրման), ինչպէս բողբոջեալ գարիին մէջ գտնուած տիաստասը (լըվիւռ տը պիէռ* էնվէրթինը**) կամ քիմիական հակազդակներու շնորհիւ ինչպէս ջրախառն ծծմբական և ջրագլօրական թթուներու միջոցաւ երբ տրուին օսլան նախ մասնիկ մը ջուր առնելով շաքարի կը փոխուի յետոյ շաքարն ալ դարձեալ մասնիկ մը ջուր առնելով պտղանոյշի կը փոխուի, (միմիայն պտղանոյշ վիճակին մէջ խմորում կարելի է ըլլալ)։

Թորեալ ըմպելիները ինքնին վնասակար ըլլալէ զկնի, ալ աւելի իրենց վնասակարութիւնը կ'աւելնայ խարդախմամբ։ Ոգելից ըմպելի անուամբ հրապարակին վրայ գտնուած բոլոր ըմպելիները, քիչ բացառութեամբ, ջրախառն արհեստական ալքոլներ են, արհեստական հոտերով և ներկերով համեմուած և գունաւորուած։

Գունաւորման համար կը գործածեն մանաւանդ ընկոյզին թարմ կեղեւը, քարամէլ և քաշու։

Արհեստական ըմպելեաց մէջ հոտաւէտ մարմիններ կը խառնեն պարզապէս այդ վերին ալքոլներուն գէշ համը ծածկելու և ըմպելեաց ախորժելի արտաքոյր մը տալու համար, այս նպատակաւ կ'աւելցնեն անուշադր (ամօնեակ) և մասնաւոր հոտաւէտ իւղ մը՝ որ կը պատրաստեն, կարագի, քօքօի և հնդկային (րիսէն) իւղերէն բորակական թթուին հետ միացնելով, ուրկէ՝ հարիւր կռամի չափ հազար լիթրա արհեստական ալքոլին հետ կը խառնեն։ Այս իւղին թունաւոր յատկութիւնը ձեզ բացատրելու համար սա ըսեմ որ մէկ սանթիկռամը շունի մը ներարկելով, տասը վարկեանի մէջ զայն կ'ոչնչացնէ։

Դեռ ուրիշ իսկութիւն (էսանս)ներով ալ կը խարդախեն և իւրաքանչիւր ոգելեաց ըմպելիներու գործարան իրեն յատուկ իսկութիւնը և գոյն գալու համար մասնաւոր նիւթը ունի։

Արհեստական ռօմին բնական հոտը տալու համար, ռօմի իսկութիւնը կ'աւելցնեն, որ էթիլական ալքոլին (ասիտ ֆօրմիկի և պիւթիրիկի*) հետ միացումէն յառաջ եկած եթեր մ'է (ֆօրմիադ է պիւթիրադ տ'էթիլ)։ Արհեստական քօնեակներու հոտը քօնեակի իսկութիւնով կուտան (էսանս տը քօնեակ), որ քանի մը տեսակ եթերներու խառնուրդ մ'է (էթեր պիւթիրիք, վալէրիք (valerigue), քաբրիք, էօնանթիլիք, բէլարկօնիք եւայլն։ Դեռ շատ հոտաւէտ իսկութիւններ կան, բոլոր պտուղներուն հոտը յիշեցնող արհեստական հոտեր քիմեագէտները կը պատրաստեն. ասոնք ամենաթունաւոր նիւթեր են, ամենն ալ ալքոլ ամելիկի տարբեր թթուներու հետ միացումէն յառաջ եկած եթերներն են, այս հոտերով մասնաւոր ըմպելիներ կը պատրաստեն։

(*) Գարեջուրի խմորային:
(**) Հակաւրցիկը:

(*) Մրջական եւ կոզեկան թթուներու;

Կան երկիրներ ուր ոգելից ըմպելեաց համար ծանր մաքս կը դնեն, կարգ մը անխիղճ վաճառականներ այս մաքսը քիչ վճարելու և լոկ շահախնդրութեան ոգիէ դրդուեալ, խարդախութեանց կը դիմեն որ թեթեւ քարիւղներէ (բէթրօլ) բեւեկնի իւղութենէ (էսանս տը թէրէպէնթին) և պանզինէ կը բաղկանայ, ասկէց զատ ալքոլի զօրութիւնը պակսեցնելու համար (քլօրիւտ տը քալսիում) կը դնեն, պարզապէս մաքսատան պաշտօնեաները խաբելու համար, առանց մտաբերելու թէ իրենց խարդախած հեղուկը խըմուելու սահմանուած է, այս միջոցաւ թէպէտեւ կը յաջողին մաքսի պաշտօնեաները խաբել, սակայն միշտ ժողովուրդն է որ կը տուժէ նիւթապէս և թէ բարոյապէս։

Նոյնպէս ցորենէն պատրաստուած ոգելից ըմպելիները պարզելու համար (քլարիֆիքասիօն՝ տուրուլթմագ) կապարի քացախատը (օսսէթաթ տր բլօմպ) կը դնեն, նմանապէս կապարեայ և պղինձէ ամաններու մէջ, այդ արհեստական ալքօլները պահելով միշտ իրենց մէջ կապար և պղինձ կը պարունակեն։

Այսքան բացատրութիւնք բաւական են կարծեմ ձեզ հասկցնելու ոգելից ըմպելեաց հասուցած աղէտներն ու վնասները, որ անզգալաբար կը խանգարեն ձեր առողջութեանը, այն բնատուր թանկագին գանձն է, որուն յարգն ու արժէքը՝ դժբաղդութիւն է ըսել, շատ քիչերնիդ կը ճանչնաք. և սոյնպէս անգիտակցաբար ահուելի ոճիր մ'է որ կը գործէք ձեր անձին դէմ։ Հրաժարեցէ՛ք խնկարկութեան պաշտօնէն որ գինեմոլութեան մահացու ճիրաններէն փըրկուիք։

Չ'գիտեմ ի՞նչ տարօրինակ գաղափարով, ձեր օրուան յոգնութիւններէն խոնջած, կ'շտապէք ձեր գրպանը պարպել այդ անգութ գինեպանին, որ անխղճօրէն կարգ մը անհամ ու խարդախեալ ըմպելիներ իր շլացուցիչ ճառամարանութիւններովը ձեզ կը խմցնէ և որ սակայն սոսկալի թոյն մ'է որ ձեր երակներուն մէջ կը քալեցնէ։

Ազնիւ ընթերցողներ, բնաւ մի գործածէք ըսելու անխղճութիւնն ալ չեմ ուզեր ունենալ, այնչափ առողջապահական չեմ. միայն զգուշացէք չափազանցելէ, չափաւոր կերպով գործածեցէք և լաւագոյնը ու ախորժահամը ընտրեցէք։ Քիչ խմել, աղէկ խմել, աւելի նախամեծարը չէ՞ միթէ։

Յ. ՃԷԼԱԼ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ԱՆՁԵՌՈՑՆԵՐՈՒ ԾԱԼԼՈՒԱԾՔ



Ձեւ 2 Շուշանի պարզ ձեւը

Բակեցէք անձեռոցը, և փռեցէք սեղանին վրայ, չորս ծայրերը միջտեղը բերէք, այսինքն կեդրոնը, ձեր կողմը գտնուած ծայրէն բռնեցէք և ծալլեցէք, այնպէս որ, վերի ծայրէն 4, հ. մեթրի չափ վար մնայ, որով կ'ունենաք եռանկիւն մը, որուն գագաթը ձեր դիմացը կը գտնուի։ Հիմա բռնեցէք ձեր կողմը գտնուած երկու ծայրերէն, և 12 հ. մեթր լայնութեամբ ծալք մը տուէք դէպ ի վեր, յետոյ հովհանոցի (բլիսէ) մը պէս ծալլեցէք, 3. հ. մեթր լայնութեամբ և ընդ ամենը 14 ծալք, 12 հ. մեթր լայնք ունեցող վերջին ծալքը, կիսով չափ դէպի վար դարձուցէք, որ ճիշտ պատկերին ձեւը առնէ, և վարի ծայրը որ ձեռքերնուդ մէջ բռնած էք, այս գործողութեան ժամանակ, առանց թուլցնելու գաւաթին մէջ դրէք, և վերի կողմէն թեթեւ մը բացէք։

Ձեւ 3 Արմաւենիի ձեւը

Ճիշտ 2 թիւին պէս չորս ծայրերը կեդրոնը բերէք, և միեւնոյն կերպով նորէն

եռանկիւն մը շինեցէք, և հոլմանօրի պէս ծալլեցէք, բայց այս անգամ իւրաքանչիւրը 2 հ. մեթր լայնութեամբ 12 ծալք։

ԱՐԱՔՍ

ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

Մէկ երկու տեղերէ մեզի հարցուած է թէ արդեօ՞ք կրնանք իրենց տեղեկութիւն տալ՝ համեմեալ հացերու պատրաստութեան մասին։

Համեմհացը կը գործածուի ընդհանրապէս առաւօտեան նախաճաշերու ատեն թէյով, կաթով, սուրճով ուտելու համար, որոնցմէ քանի մը տեսակներու պատրաստութեան վրայ պիտի գրենք հետզհետէ։

Սովորական համեմհաց

Աղէկ տեսակէ 1 քիլօ մեղր եռացուցէք և տաք տաք լեցուցէք 1 քիլօ հաճարի (չաւտար) ալիւրի վրայ։ Երբ ալիւրը, մեղրը ամբողջ ծծէ, աւելցուցէք վրան 150 կռամ կաթի մէջ հալած՝ 62 կռամ ճերմակ կալիի (բօթաս) և 10 կռամ ալ ծեծած անիսոն։ Թրեցէք աղէկ մը այս խմորը, որպէս զի բօթասը ամէն կողմ հաւասարապէս տարածուի, ապա թէ ոչ հացին ամէն կողմը հաւասարապէս չուռենար. յետոյ սեղանի մը վրայ առնելով՝ երկայն գլանի կամ քառանկիւնի ձեւ մը տուէք, 3—4 հ. մէթր հաստութեամբ, և կտրտեցէք ձեր ուզած ձեւերոմբիդ, քառակուսի, երկայն, եւայլն։ Փետուրով կամ բարակ վրձինով մը կաթ քսեցէք վրան, շարեցէք առաջուց մէջը իւղոտած ափսէի մը (կամ խմորեղէնի թաւա) եփեցէք թեթեւ փուռի մէջ, (հացը եփելէն վերջը, փուռին ունեցած տաքութեան չափով), և ողորկեցէք (ճիլա վուր) անոնց երեսը հետագայ պատրաստով, 250 կռամ շաքարի․ խառնեցէք 9 հաւկթի ճերմկուց առաջուրնէ լաւ մը յարած, սուրճի դգալով մը վանելային սերուց (ֆոնտ դը վանիլ) և 2 կռամ վանելեա, որոնք պէտք է աղէկ մը իրար խառնել։

* * *

Վանիլիայի սերուց (վանելիայը գռեմա)

Առէք 1 լիթրա կաթ, 125 կռամ շաքար և 8 կռամ վանելեա՝ որ պէտք է մանրուած ըլլայ։ Քառորդ ժամ մ'եփեցէք, կրակէն վար առէք ու պարզուած անցուցէք, 3 հաւկթի ճերմկուց և 6 հաւկթի դեղնուցը լաւ մը զարնելով փրփրեցուցէք, և միւսներուն հետ խառնեցէք, խորունկ ամանի մը մէջ լեցունելով դրէք ուժը անցած փուռի մը մէջ, մինչեւ որ սերուցը բռնէ (բէնմէ-մարի ըսուած)։ Եթէ փուռ չունիք հետեւեալ կերպով ալ կրնաք ընել։ Մաղմաղ կրակի մը վրայ դրէք ամանը ու վրան ծածկեցէք և ծածկոցին վրայ ալ տաք մոխիր դրէք։ Այս սերուցը ուրիշ տեսակ խմորեղէններու ալ կրնայ գործածուիլ. Ինչպէս որ վերի համեմհացին պատրաստութեան մէջ պիտի գնէք, սուրճի դգալ մը։

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ջինկօյէ առարկաներ սեւ ներկելու ներկ

100 լիթրա ջուրի մէջ 2-3 քիլօի հաշւով պղնձի ծծմբատ (կէօզ թաշը) հալեցուցէք, և ներկուելի առարկաները խոթեցէք այդ լուծման մէջ. հանեցէք և մաղմաղ կրակի մը մօտ չորցուցէք, որրեցէք անգամ մը և յետոյ աստուեղի (ֆանելա) կտորի մը վրայ քանի մը կաթիլ ձէթ (զէյթին եաղը) կաթեցնելով շփեցէք։

* * *

Ծորակներ (մուսլուգ) կարելէ ագիլելու խիւս (մաճուն)

Զատ զատ հալեցուցէք հաւասար չափով ճարպ (իչ եաղը) և արաբական խէժ (զամք արապի)․ իրար խառնեցէք և նոյն միջոցին աւելցուցէք վրան բարակ փոշի եղած գրաքար (կռաֆիթ, զօպայի պօյա) նոյն չափով․ այսինքն խառնուրդին երրորդ մասը․ զոր օրինակ, իւրաքանչիւրէն 5 ական կամ 10 նական կռամ։ — Խառնուրդը չի պաղած կաղապարներու մէջ լեցուցէք, և կազմեցէք փոքր գաւազանիկներ։ Գործածելու համար թեթեւ կերպով տաքցնելու է գաւազանիկը և քսելու է ծորակին բանալիին բոլորտիքը։

* * *

Տակառներու (ֆըչը) համար մածուկ

Տակառներու ճեղքերը և ծակերը գոցելու համար հետեւեալ բաղադրութիւնը աղէկ ճանչցուած է։ Հալեցուցէք կամաց կրակի վրայ․

Խոզի ճարպ (տօմուզ եաղը)	60 մաս
խոզանոցի աղ	40 »
ճերմակ մեղրամոմ	33 »

կրակէն վար չառած խառնեցէք 40 մաս բարակ մաղէ անցած մոխիր։ Այս խառնուրդով՝ տաք տաք ծակերը և ճեղքերը գոցեցէք․ բայց տակառը պարապ եղած ատեն։

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ

ՄԼՈՒԿԷՆ ՎԵՐՋ ՄՈՒԿԸ

… Խմբագիր,

Ձեր 5 Թուոյն մէջ մլուկը կարդացած ատեն, մուկը միտքէս անցաւ։ Նոր գործի մը մէջ մտած եմ, որուն անպատճառ մուկերը բաժանորդ պիտի ըլլան առանց հաճութիւնս առնելու։

Այս չարաճճիներուն շահէս բաժին չտալու և զիրենք յուսախաբ ընելու համար, կը խնդրեմ որ բարեհաճիք զիրենք վայելչապէս հիւրընկալելու միջոցը ցոյց տալ։

Նպարավաճառները չ'կարծեն թէ միայն իրենք են ասոնց մատակարարը, մեր աշխարհի բանուած մորթերը (Դէշի) ուտելով աւելի կը գիրնան և լարուած ծուղակները կը ծաղրեն։ Այս մուկերուն ձեռքը իյնալը ցաւալի բան մ'է, գլուխը եկողը գիտէ, կօշկավաճառներն ալ գիտեն աս լիրկ թշնամիներուն շահատակութիւնը, սակայն ասոնց ո՛ր աստիճան անընկճելի ըլլալը իմանալու համար, հարցուցէք Ստաբազարի Նպարավաճառներէն Տէր Սարգիս Սրապեանին․ 15 տարիի չափ առաջ սոյն քաղաքին շուկային մեծ մասը լափող հրդեհը յիշեալին խանութէն ծագելով, ամբողջ ունեցածը ոչնչացաւ․ մինչդեռ բարեկամները զինքը շրջապատելով մխիթարելու կը ջանային, ինքզինք մխիթարուած համարեց ըսելով թէ, «Թէքմիլ ունեցած մալս վառեցաւ հըմա, պարի մուկերուն ձեռքէն խալսեցա՛յ եա՛»։ Հաշիւ ըրէք թէ իր կատուներով և ծուղակներով ո՛ր աստիճան մաքառած ու չէ կրցած յաղթել մուկերուն։

Յ. ՇԷԼԷՖԵԱՆ

Յ. ԹԻՒՅՍԻՒԶԵԱՆ ԵՒ Պ. ՍՐԱՊԵԱՆ

Ցաւօք լսեցինք Փարիզաբնակ ազգայիններէն Թիւյսիւզեան Յովհաննէս էֆէնտիի մահը, 69 տարեկան հասակին մէջ, որ ծանօթ էր հանրութեան իր գրուածքներով։

Ծնած էր Խասգիւղ 1833 յունիս 28ին, աղքատ ծնողաց զաւակ, իր նախնական կրթութիւնը ստացած է Ներսէսեան վարժարանին մէջ։ 1848ին Միսաքեան Խաչատուր Պօլէօի, Տր․ Մոզեանի և ուրիշներու հետ Փարիզ ուղեւորած է։

Հոն առեւտրական վարժարանի երեք տարուան շրջան մը լմնցնելէ վերջ, Նանդի մօտ գտնուած Կրան Ժուանի

երկրագործական վարժարանը կը յաճախէ, տարուոյ մը չափ և ապա Վերսայլի երկրագործական համալսարանը՝ որուն փակման պատճառաւ՝ Կոլինեոնի երկրագործական դպրոցը կ'աւարտէ իր ուսումը և վկայականը կ'առնու. յետոյ Սէնդ Դիլի շերամատան մէջ կ'աշխատի շերամաբանութեան։ Ութը տարի Ֆրանսա մնալէն վերջ Պոլիս կը վերադառնայ և ապա դարձեալ Փարիզ ուր 10 տարի անընդհատ առեւտրական և սեղանաւորական գործերով կը զբաղի։ 1866ին կը մտանակցի տիեզերական արուեստահանդեսին մատնաժողովին։

Վերջերս իր աչքերը բոլորովին կուրութեան մատնուած էր։ կրկին անգամ ամուսնացած էր։

Իր վերջին յօդուածը եղած է իր ինքնակենսագրութիւնը (Մուէ. թիւ 41)։

* * *

Արուեստագէտ մ'ալ կորոյս աղգը որ արդարեւ մեծ համբաւ մը շինած էր, Պետրոս Սրապեան, որ 9 ապրիլի մեռաւ Սոֆիայի մէջ 67 տարեկան հասակին մէջ։

Իր անունն երբեմն մեծ հռչակ ունէր Պոլսոյ ընկերական շրջանակներուն մէջ, իւր վրձինին արդիւնքն է «Մշեցի աղջիկը» իւղաներկը։

Վերջերս կանչուած էր Էջմիածինէն ուր գծագրեց կարգ մը կրօնական պատկերներ, 1—2 տարի առաջ ալ գաղթած էր Պուլկարիա՝ ուր կը մեռնի ամեն Հայ արուեստագէտի պէս աղքատիկ վիճակի մէջ։

Երբ արուեստագէտներու անհետացումը հետզհետէ կը դրենք, արդեօք նորերու երեւումը արձանագրելու յոյսը և հաճոյքն ալ պիտի ունենա՞նք։

Վ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

ԱՏԱ-ԲԱԶԱՐ. — Ս. Ս. — Ղրկեցինք ընկալագրերը և նամակ։

ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մ. Զ. — Նամակ կ'ստանաք.

ՍԸՎԱԶ. — Ց. Գ. — Նամակ կ'ստանաք. Լէսլիվ Մաժիլքի և Վէնիւսի օրինակներէն կ'ստանաք, սոյն աճառին տեղւոյդ գործակալը ըլլալու համար, կրնաք դիմել վաճառման կեդրոնատեղին։

ԻԶՄԻՏ. — Ց. Ս. — ԵՒ ԱՏԱՆԱ. — Մ. Գ. —Նամակներնիդ առինք, ձեր փափաքին համեմատ Հանրագիտակի գործակալ չէք այլեւս։

ՄԱՐԱՇ. — Հ. Ֆ. Վարժապետեան — Գործակալէն կրնաք ստանալ Ձեր նամակին պատասխանը, շնորհակալութիւն։

ՈՒՐՖԱ. — Գ. Կ. Ո. — Մէկ օրինակ կը ղրկուի Ձեզ։

ԵՒԴՈԿԻԱ. — Ց. Գ. Գ. — Ըստ ձեր փափաքին գործակալաց շարքէն կը չնչենք Ձեր անունը. նոր գործակալ մը դուք որոշեցէք, կ'ստանաք մէկ օրինակ Ձեր հասցէին։

ՌՕՏՕՍԹՕ. — Մ. Կ. Մալաքեան — հաճեցէք Ձեր ղրկած՝ յօդուածին ամբողջութիւնն ալ ղրկել, որ հետզհետէ հրատարակենք։

ԿԱՐԻՆ. — Ե. Տ. Ազարեան — Ստացանք 70 ղրուշ, վեցամսեայ բաժանորդ նշանակեցինք, գրքերը կ'ստանաք։

ԼՕՄ-ԲԱԼԱՆՔԱ. — Ա. Խ. — Ստացանք 8 ֆր. թերթերը կը ղրկուին Ձեր ըսած հասցէին,

Թ. 12. —Պօղոս Յովհաննէս Շէլէֆեան— Ձեր հարցումը կը հրատարակենք։

ՊՕԼԻՍ. — Պ. Լեւոն կը հարցնէ թէ Թ. 13 — Վարդի տունկերը որդնոտելէ ազատելու միջոցը ո՞րն է։

Թ. 14 — Մժեղները. (սիվրի սինէք). որոնք շատ հաճոյալի չեն մեզ համար, ի՞նչ ընելու է որ հեռանան։

ՏՐԻՊՈԼԻ. — Գ. Գըլըճեան. — Ստացանք 50 ղրուշ. թերթերը կ'ստանաք։

ԱՐՏՕՆԱՏԷՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Մանկանց եւ պատանեկաց համար գրքեր

(Շար. թիւ 7 էն)

Հենրիկոս և Մարիամ բարոյավէպ 7
Հենրիկոս էջանֆէլ » » 7
Առակք Ֆենելոնի Թարգմ. Թ. Կէչըլըրեան 12
Զբօսարան մանկանց 2
Պատմ. Մեծին Աղեքսանդրի 6
Նոր տարի 3
Հրահանգ մանկանց 10
Պօղոսիկ բարոյավէպ Վ. Հիւկօ. 2
Ֆէլիքս Պուլինէ 15
Տեսարան Հրտ. Զարդարեան էջ 96. 4
Կարգադրութիւն առողջապահութ. 8
Տնտես. Տեղեկութիւնք Զօրայեան 12
Մանուկներու արքայութեան 4
Ագրար Թովմասի անուկը 5
Գործնական Բարոյագիտութիւն 2½
Նուէր առ ուսանողս 2

ՎԻՊԱԿԱՆ ԳՐՔԵՐ

Մաթիլտ 4 հատոր կազմ. 40
Պ. Լըքօքի ծերութիւնը 4 հատ. 20
Անիծեալը ... Աբբայ 40 հատ 35
Թշուառներ ամբողջ 10 հատ. 180
Մաթիաս Սանտորֆ 4 հատ. 25
Քսան հազար փարսախ ծովերու տակ 2 հատ. 20
Շուրջ զլուսնով 8
Երկրէ ի լուսին 20
Գամելիազարդ Տիկին, Ա. Տիւմա Որդի(*) 30
Թունաւորիչ Աղջիկը 4 հա. 20
Աղջկան մը սիրտը 12
Սիրանոյշ Տիկ. Տիւսար Փաշա 20
Ճերմակ վարդը 6
Քարափը հին(*) Ք. Տը Մօնթէբէն 25

Զարդարեան գրատունը պատրաստ ունի սոյն գրքերը. վաճառմունք կանխիկ ու երաշխաւորութեամբ ապառիկ կամ ժամանակի վճարումով։

(*) Սպառեալ։

Զարդարեան գրատունը կ'ստանձնէ ամեն տեսակ տպագրական գործերուն պատրաստութիւնը, ինչպէս և գրքի, տետրակի եւայլն կազմի գեղեցիկ պատրաստութիւններ։

Կը վաճառէ ու կը գնէ ամեն տեսակ հայերէն գրքեր հին ու նոր, հին ձեռագրեր. լրագրի հաւաքածոյներ և անջատ թիւեր և գործ. նամակադրոշմ։

Դիւրամատչելի պայմաններ։

Վաճառումները կանխիկ են և զեղչը գոհացուցիչ։

MARQUE DEPOSÉE

ՀՈՆԿ-ՔՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ. ՊՈԼԻՍ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

ՆԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԽՍԱԳՈՒԼԵԱՆ

Ճէլալ պէյ խանի դրան կից, թիւ 20

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդարձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը։ Գաւառներու յանձնարարութիւնները փութով և խնամով կը կատարուին։

Չինական, Հնդկական, Ճավայի և Սէյլանի էն ազնիւ թէյերէն ուղղակի բերուած, կը գտնուին հոն։

Զգուշանալ սոյն վաճառանիշէն կեղծերէն։

Փնտռել ՆԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԽՍԱԳՈՒԼԵԱՆ Ստորագրութիւնը։

ԱԶԴ

Հանրագիտակ կը հրատարակուի ամէն Շաբաթ օր կանոնաւորապէս։

Հանրագիտակ կը պարունակէ Գրական, Գիտական, Երկրագործական, Տնտեսական, Արհեստական եւայլն, եւայլն. շահեկան նիւթեր։

Երկրագործական, Արհեստական եւ Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով։

Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ Տնօրէնութիւն Հանրագիտակ լրագրի

Կ. Պոլիս, Զարդարեան Գրատուն, Զափթիէ-Եօքուշու թիւ 50

در عليه ده چقماقجيلرده ٥٠ نومرولى زارطاريان كتبخانه‌سنده (حانراقيداق) مجموعهٔ علوم غزته‌سى اداره‌سنه

Հանրագիտակ՝ պատրաստ է ընդունիլ ամէն տեսակ ծանուցումներ, ազդարարութիւններ, խիստ դիւրամատչելի պայմաններով։ Հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն ղրկել երկու օրինակ, զոր պիտի ազդարարենք հասարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը։

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

ԱՅՆԹԱՊ. — Գարեգին էֆ. Պօղարեան

ԱՏԱ-ԲԱԶԱՐ. — Ստեփան էֆ. Սափրիչեան

ԱՐԱԲԿԻՐ. — Յ. Պ. էֆ. Մանուկեան.

ԱԹԷՆՔ. — Մկրտիչ էֆ. Մանուկեան.

ԳՈՒՐՏ-ՊԷԼԷՆ. — Արժ. Տ. Ստեփան քահանայ Մկրեան.

ԳԱՀԻՐԷ. — Մ. Պաղտասար էֆ. Ս. Նաթանեան.

ԷՐԶՐՈՒՄ. — Եղ. էֆ. Տ. Ազարեան.

ԹԷՀՐԱՆ. — Կարապետ էֆ. Բաբայեան

ԻԶՄԻՐ. — Կարապետ էֆ. Մալճանեան.

ԻԶՄԻՏ. — Աբրահամ էֆ. Կասուճեան.

ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան.

ԽԱՐԲԵՐԴ. — Խաչով էֆ. Քէշիշեան.

ԿԷԼԻՊՕԼԻ. — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան.

ԿԻՐԱՍՈՆ. — Արմենակ էֆ. Սօմունճեան.

ԿԵՍԱՐԻԱ. —

ՄԱՐԱՇ. — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ Վարժապետեան.

ՄԱՆՉԵՍԹՐ. — Յակոբ էֆ. Բոլատեան.

ՄԱՐԶՈՒԱՆ. — Յովհաննէս էֆ. Յակոբեան.

ՄԱՐՍԻԼԵԱ. — Նազարէթ էֆ. Զարդարեան.

ՄՈՒՇ. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան.

ՊԱՆՏԸՐՄԱ. — Արմենակ էֆ Ս. Մըրեան.

ՊԱՐՏԻԶԱԿ. — Վահան էֆ. Ճլկունի.

ՊՐՈՒՍԱ. — Օննիկ էֆ. Լութֆեան.

ՌՈՏՈՍԹՕ. — Յովհաննէս էֆ. Տէմիրեան.

ՍԱՄՍՈՆ — Կարապետ էֆ. Սէֆէրեան.

ՍԸՎԱԶ. — Յ էֆ Գարաիկէօզեան.

ՏՐԱՊԻԶՈՆ. — Սահակ էֆ Էթմէքճեան.

ԳՐԱՏՈՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Գիրք գնել կ'ուզէ՞ք, դիմեցէք Զարդարեան Գրատունը. հոն միշտ պիտի գտնէք ամէն ուզածնիդ եւ միշտ զեղչով:

Հանրագիտակ կը ծախուի ամէն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Լանկա, Խաչիկ էֆ. Ֆէսճեան Դեղարանը.
Սամաթիա, Կայարանը Թիւթիւնճի Արթին աղայի խանութը.
Մագրի-Գիւղ, Պօղոս էֆ. Ավնաւորեանի խանութը.
Գատը-Գիւղ, Լեւոն էֆ. Զապուքճեան դեղարանը.
Սկիւտար Փիշթօֆճեան էֆ.ի խանութը.
Բերա, Մեծ փողոց Գաւնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը.